ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

**Չարենցավանի համայնքապետարանը** ստորև ներկայացնում է իր կարիքների համար **ռեգուլյար բենզինի** ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1>>** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2019 թվականի հունվարի 09-ին** կնքված N **<<ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-1>>** պայմանագրում **2019 թվականի հունվարի 10-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ ապրանքի մատակարարումն իրականացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու և կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքվելու դեպքում:

Փոփոխության նկարագրություն: Ապրանքի մատակարարումն իրականացվելու նպատակով նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ և կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայություն:

Պատվիրատու՝ **Չարենցավանի համայնքապետարան**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1

**09.01.2019Թ. ԿՆՔՎԱԾ N <<ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-1>> ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Չարենցավան <<10>> 01 2019թ.

**Չարենցավանի համայնքապետարանը**, ի դեմս համայնքի ղեկավար **Հ. Կ. Շահգալդյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **<<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ն,** ի դեմս Ընկերության տնօրեն **Յա. Խաչատրյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 09.01.2019թ. կնքված N <<ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-1>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ և 8.15-րդ կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի (կցվում է):

1.2 Սահմանել, որ Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կից վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**<<ԳՆՈՐԴ>>**
**Չարենցավանի համայնքապետարան**
**ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1**
**ՀՀ ՖՆ ԳՎ**
**Հ/Հ 900132111023**
**ՀՎՀՀ 03022497**
**Համայնքի ղեկավար**
**Հ. Կ. Շահգալդյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

**<<ՎԱՃԱՌՈՂ>>**
**<<ՖԼԵՇ>> ՍՊԸ**
**ՀՀ, ք. Երևան, Ե.Կողբացու 30**
**<<ԱՐԱՐԱՏԲԱՆԿ>> ԲԲԸ**
**Հ/Հ 15100166690902**
**ՀՎՀՀ 01808789**
**էլ. հասցե flash@flashltd.am**
**հեռ. (37410) 53-42-33**
**Տնօրեն Յա. Խաչատրյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված
09.01.2019թ. կնքված <<ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-1>> ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
<<10>> 01 2019թ. կնքված համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 09132200/505 | Բենզին, ռեգուլյար | 382,800 | 842,160 | 1,320,660 | 1,799,160 | 2,201,100 | 2,679,600 | 3,177,240 | 3,694,020 | 4,153,380 | 4,670,160 | 5,167,800 | 5,655,000 | 5,655,000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

<<ԳՆՈՐԴ>>
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<ՖԼԵՇ>> ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ե.Կողբացու 30
<<ԱՐԱՐԱՏԲԱՆԿ>> ԲԲԸ
Հ/Հ 15100166690902
ՀՎՀՀ 01808789
էլ. հասցե flash@flashltd.am
հեռ. (37410) 53-42-33

Տնօրեն՝ Ցա. Խաչատրյան

(ստորագրությունը)
Կ.Տ